գործունեության հետ կապված ներդրումները;



4. ինտելեկտուալ սեփականությունը, որը ներառում է մասնավորապես իրավունքներ.

- գրական եվ գեղարվեստական ստեղծագործությունների, այդ թվում ձայնագրությունների,
- գյուտարարության՝ գործունեության բոլոր բնագավառներում
- արդյունաբերական նմուշների, օրինակների,
- կիսահաղորդիչների ծածկի հետ կապված աշխատանքներ,
- առևտրական գաղտնիքների, , , նոու-հաուսների, , , կոնֆիդենցիալ առեվտրական ինֆորմացիաների, ապրանքանիշների, ծառայողական նշանների եվ ֆիրմային անվանումների նկատմամբ, եւ

5. օրենքով կամ պայմանագրով տրվող ցանկացած իրավունք, ինչպես նաեւ օրենքից բխող ցանկացած արտոնագիր եվ թույլտվություն:

բ) կողմի , , ընկերություն, , նշանակում է ցանկացած միություն, ընկերություն, ասոցիացիա, ընկերակցություն կամ օրինական գործող այլ կազմակերպություն՝ հիմնադրված կողմերի կամ քաղաքական ստորաբաժանումներ օրենքների եվ նորմերի համաձայն, անկախ նրանից թե դրանք կազմակերպվել են ջանույթ ստանալու համար թե ոչ, մասնակցելու համար ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի ջանույթներում:

գ) կողմի , , քաղաքացի, , նշանակում է ֆիզիկական անձ, որը հանդիսանում է կողմի քաղաքացի՝ կողմի գործող օրենսդրության համապատասխան:

դ) , , եկամուտ, , նշանակում է ներդրումներից ստացված կամ նրա հետ կապված գումարներ, ներառյալ ջանույթը, դիվիդենդը, տոկոսները, կապիտալի աճից ստացված եկամուտները, հեղինակային իրավունքի համար վճարը, կառավարման, տնօրինական օգնության կամ այլ վճարումները, բնեղեն արտահանությունը եկամուտները:

ե) , , Ուղեկցող գործունեությունը, , ներառում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով ընկերությունների, բաժանմունքների, գործակալությունների, գրասենյակների, գործարանների կամ այլ կազմակերպությունների ստեղծումը, հսկողությունը, գործունեությունը, պահպանումն ու օտարումը, պայմանագրերի կնքումը, իրագործումը եվ հարկադրական կատարումը, տարբեր տեսակի ունեցվածքի ձեռք բերումը, օգտագործումը, պաշտպանությունը եվ տնօրինումը, ներառյալ ինտելեկտուալ սեփականության իրավունքը, միջոցների փոխառությունը, բաժնետոմսերի եվ այլ արժեթղթերի թողարկումը, գնումը եվ վաճառքը, ինչպես նաեւ արտասահմանյան արժույթի ձեռք բերումը ներմուծումների համար:

2. կողմերից յուրաքանչյուրին իրավունք է վերապահվում մերժելու սույն Պայմանագրի համաձայն ցանկացած ընկերությանը առավելություններ տրամադրելը, եթե այդ ընկերությունը վերահսկվում է որեւէ երրորդ պետության քաղաքացիների կողմից, իսկ մյուս կողմի ընկերությունների վերաբերյալ, եթե ընկերությունը չի ծավալում էական ձեռնարկատիրական գործունեություն մյուս կողմի տարածքում կամ եթե այն վերահսկվում է երրորդ պետության քաղաքացիների կողմից, որի հետ նման առավելություններ տալուց հրաժարվող կողմը չի պահպանում տնտեսական նորմալ հարաբերություններ:

3. Ունեցվածքի ներդրման կամ կրկնակի ներդրման ձեւերի ոչ մի փոփոխություն չի կարող ազդել դրա բնույթի վրա, որպես ներդրում:



1. Կողմերից շուրաքանչյուրը կթույլատրի կատարել ներդրումներ եվ ծավալել դրա հետ կապված գործունեություն ու կատարել ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան նման իրավիճակում ներդրումներ եվ համատեղ գործունեություն իրականացնող իր բաղաբաղիների կամ ընկերությունների կամ ցանկացած երրորդ պետության բաղաբաղիների կամ ընկերությունների համար՝ կախված նրանից, թե նրանցից որն է ավելի նպաստավոր՝ վերապահելով իրավունք շուրաքանչյուր կողմին սահմանել կամ պահպանել բացառություններ այն ոլորտներում, որոնք թվարկված են սույն Պայմանագրի հավելվածում: Կողմերից շուրաքանչյուրը համաձայն է սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից առաջ տեղեկացնել մյուս կողմին բոլոր այն օրենքների ու կանոնների մասին, որոնք վերաբերում են հավելվածում թվարկված մշտական կամ ոլորտներին: Բացի դրանից կողմերից շուրաքանչյուրը համաձայն է մյուս կողմին տեղեկացնել հավելվածում թվարկված մշտական կամ ոլորտներում հետագա ցանկացած բացառությունների մասին, նման բացառությունները հասցնել նպագադրված: Ցանկացած հետագա բացառությունը, չպետք է կիրառվի ոլորտում գոյություն ունեցող ներդրման նկատմամբ այն ժամանակ, երբ բացառությունը դառնում է արդյունավետ: Ցանկացած բացառությունների հիման վրա արամադրվող պայմանակարգը, բացի նրանցից, որոնք նշված են հավելվածում, կլինեն ոչ պակաս բարենպաստ, քան նրանք, որոնք նման դեպքերում արամադրվում են ցանկացած երրորդ պետության բաղաբաղիների կամ ընկերակցությունների ներդրումների եւ դրանց հետ կապված գործունեության նկատմամբ:

2. ա) ներդրումներին կորամադրվի արդարացի կանոնակարգ, դրանք կլինեն լիարժեք պաշտպանված եւ անվտանգ եվ ոչ մի դեպքում նրանց չի արամադրվի այնպիսի կարգ, որը լինի միջազգային իրավունքի սկզբունքների եվ նորմերի հետ անհամատեղելի:

բ) Կողմերից ոչ մեկը ոչ մի կերպ չի խոչընդոտի ներդրումների կառավարմանը, գործունեությանը, բովանդակությանը, օգտագործմանը, ձեռք բերմանը, ընդլայնմանը կամ տնօրինմանը՝ կամային կամ խորակա միջոցների ընդունման ճանապարհով: Ե-րդ եվ 7-րդ հոդվածների ցանկացած միջոց կարող է լինել կամայական կամ խորակա, չնայած այն բանին, որ կողմը ունեցել է կամ օգտվել է կողմերի դատարաններում կամ վարչական մարմիններում նման միջոցը քննարկելու հնարավորությունից:

գ) Շուրաքանչյուր կողմ կպահպանի ներդրումների հետ կապված ցանկացած պարտավորություն, որն ինքն ընդունել է:

3. Արտասահմանցիների ժամանակն եվ տեղավորմանը վերաբերող օրենսդրական ակտերին համապատասխան, կողմերից շուրաքանչյուրի բաղաբաղիներին կթույլատրվի մեկնել եւ մնալ մյուս կողմի տարածքում ներդրման իրականացման, զարգացման, կառավարման կամ գործելու հարցերով խորհրդակցություն անցկացնելու նպատակով, ինչի հետ կապված առաջին կողմի բաղաբաղիները կամ նրանց վարձած ընկերությունները ներդրել կամ իրականացնում են զգալի չափով ներդրումներ կամ այլ միջոցներ:

4. Ընկերություններին, որոնք օրինականորեն ստեղծված են մի կողմի գործող օրենքներին եվ կանոններին համապատասխան եվ հանդիսանում են ներդրողներ, կթույլատրվի իրենց ընտրությամբ անկախ բաղաբաղիությունից վարձել ղեկավար կառավարչական անձնակազմ:



5. Կողմերից ոչ մեկը պահանջներ չի դի ներդրումների իրականացման, ընդլայնման կամ պահպանման նկատմամբ, որոնք նախատեսվում կամ իրականացվում են արտադրված ապրանքների արտահանում կամ որոշում են, թե որ ապրանքները կամ ծառայությունները պետք է ձեռք բերվեն տեղական շուկայում, կամ սահմանում են ցանկացած համանման պահանջներ:

6. Յուրաքանչյուր կողմ արդյունավետ միջոցներ կապահովի ներդրումների, ինվեստիցիոն համաձայնագրերի եւ ներդրումների իրագործման գծով իրավունքների ապահովման եւ պահանջների ներկայացման համար:

7. Կողմերը կհրապարակեն բոլոր օրենքները, կանոնները, վարչական պրակտիկան եւ ընթացակարգը, ինչպես նաեւ դատական վճիռները, որոնք վերաբերում են ներդրումներին կամ առնչվում են նրանց հետ:

8. Ոստ ԱՄՆ-ի կողմից ներդրումների վերաբերյալ սահմանված կարգի եւ սույն հոդվածի դրույթների, ԱՄՆ-ի ցանկացած նահանգում, տարածքում կամ տիրույթում Հայաստանի Հանրապետությանը կտրամադրվի ոչ պակաս բարենպաստ պայմաններ քան այն, որը տրամադրվում է ԱՄՆ-ի բաղաբացիներին եւ ընկերություններին, որոնք մշտապես բնակվում են ԱՄՆ-ի նահանգներում, տարածքներում եւ տիրույթներում, ինչպես նաեւ այն ընկերություններին, որոնք օրինական ստեղծվել են ԱՄՆ-ի նահանգների, տարածքների եւ տիրույթների օրենքներին եւ կանոններին համապատասխան:

9. Սույն Պայմանագրի դրույթները, որոնք վերաբերվում են այն ազգին, որի համար ստեղծվում են առավել բարենպաստ պայմաններ, չեն տարածվում այն առավելությունների վրա, որոնք կողմերից յուրաքանչյուրը տրամադրել է ցանկացած երրորդ պետության բաղաբացիներին կամ ընկերություններին եւ նեղով՝

ա) սվյալ կողմի պարտավորություններից, որոնք բխում են ազատ առեւտրի գոտու կամ մաքսային միության Լիարժեք անդամությունից կամ,

բ) սվյալ կողմի պարտավորություններից, առեւտրի եւ սակագների գրել-խափոր համաձայնագրի շրջանակներում ցանկացած բազմակողմանի միջազգային համաձայնագրի համապատասխան, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Պայմանագրի ստորագրումից հետո:

10. Կողմերը ընդունում են համաձայնվում են որ, ,ուղեկցող գործունեությունը, , ներառում է առանց սահմանափակման գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝.

- ա) Լիցենզավորման համար արտոնությունների եւ իրավունքների վերապահում,
- բ) գրանցումներ, Լիցենզիաներ, թույլատվություններ եւ այլ տիպի հավանություններից, որոնք ցանկացած դեպքում պետք է հրապարակվեն անհապաղ, օգտվելով հնարավորություն,
- գ) ֆինանսական հաստատություններ, վարկային շուկաներ մոնտրի հնարավորություն,
- դ) ֆինանսական հաստատություններում պահվող իրենց ֆոնդերից օգտվելու հնարավորություն,
- ե) ձեռնարկատիրության նորմալ գործունեության համար անհրաժեշտ սարքավորումների ներմուծում եւ տեղադրում, ներառյալ, բայց առանց սահմանափակման՝ գրասենյակների համար սարքավորումներ եւ ապոմեքենաներ, եւ նման ձեւով ներմուծված ցանկացած սարքավորումների եւ ապոմեքենաների արտահանում,

- գ) առեւտրական լրատվության տարածում,
- է) շուկայական ուսումնասիրությունների կատարում,
- ը) առեւտրական ներկայացուցիչների, ներառյալ գործակալների, խորհրդատուների եւ մատակարարների նշանակում եւ նրանց մասնակցության ապահովում առեւտրական տնտեսականությունում եւ առեւտրի զարգացմանը օժանդակող միջոցառումներին,
- թ) ապրանքների եւ ներքին ծառայությունների մարկեթինգ, ներառյալ բաշխման եւ մարկեթինգի համակարգերի միջոցով, ինչպես նաեւ գովազդի եւ անհատների ու ընկերությունների հետ անմիջական կապերի միջոցով,
- ժ) կենցաղ-սպասարկման ծառայություններ, սոցիալական ծառայություններից կապալով զերցված առեւտրական ջնջերից անխորական գներով օգտվելու հնարավորություն, եթե գները սահմանված են կամ հսկվում են կառավարության կողմից,
- ի) հումքից բոլոր տիպի հիմնական ֆոնդերից եւ ծառայություններ եւ անխորական գներով օգտվելու հնարավորություն, եթե գները սահմանված են կամ հսկվում են կառավարության կողմից:

### Հոդված 3.

1. Ներդրումները չեն բռնազրավզի կամ ազգայնացի ուղղակի կամ անուղղակի մասնաբաժնով /, բռնազրավում, / այնպիսի միջոցառումների իրականացմամբ, որոնք հաճախարարը եւ բռնազրավմանը կամ ազգայնացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կատարվում են ելնելով հասարակական ջանքից, անխորականության հիմքի վրա, օրենքով եւ 2-րդ հոդվածում նախատեսված ռեժիմի ընդհանուր սկզբունքներով եւ սահմանված կարգով արդյունավետ եւ համապատասխան փոխհատուցման վճարումով:

Փոխհատուցումը պետք է համարժեք լինի բռնազրավված ներդրման իրական շուկայական արժեքին՝ բռնազրավումից կամ նրա մասին հայտնի դառնալուց առաջ, կախված այն բանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել,

- պետք է հաշվարկվի ազատ օգտագործվող դրամով տվյալ ժամանակի գերակշռող կուրսով,
- պետք է վճարվի առանց ուշացման,
- պարունակի բռնազրավման օրվանից սկսած ընդունելի առեւտրական կուրսին համապատասխան տոկոսներ,
- լինի իրացնելի եւ ազատորեն փոխադրելի:

2. Յուրաքանչյուր կողմի բաղաքացի կամ ընկերություն, որը հայտարարում է իր ներդրումների լիովին կամ մասնակի բռնազրավման մասին, իրավունք ունի պահանջելու, որպեսզի մյուս կողմի համապատասխան իրավական կամ վարչական մարմինները որոշեն՝ թե արդյոք դա բռնազրավում է թե՛ ոչ, եւ եթե այո, ապա այդպիսի բռնազրավումը ու նրան զուգորդված ցանկացած փոխհատուցումը համապատասխանում է արդյոք միջազգային իրավունքի սկզբունքներին:

3. Յուրաքանչյուր կողմի բաղաքացիներին կամ ընկերություններին, որոնց ներդրումներին վնաս է պատճառվել մյուս կողմի տարածքում պատերազմի կամ այլ զինված ընդհարման, հեղաշրջման, արտակարգ դրության, խռովության, բաղաքացիական անկարգությունների կամ համանման իրադարձությունների հետեւանքով, կտրամադրվի ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան՝ որ տրամադրվում է նրա կողմից իր բաղաքացիներին կամ ընկերություններին, կամ ցանկացած երրորդ երկրի բաղաքացիներին եւ ընկերություններին, կախված նրանից, թե որն է առավել նպաստավոր:



#### Հոդված 4.

1. Կողմերից յուրաքանչյուրը թույլ կտա ներդրման հետ կապված բոլոր փոխադրումներն, իրականացնել անարգելք եվ առանց ուշացումների, ինչպես իր տարածքի վրա, այնպես էլ իր տարածքից դուրս:

Այդպիսի փոխադրումներն ընդգրկում են.

ա) եկամուտներ;

բ) փոխառուցում՝ 3-րդ հոդվածի համաձայն;

գ) ներդրումների առիթով ծագած վեճերից բխող վճարումներ;

դ) վճարումներ պալմանագրի հիման վրա, ներառյալ պարտքի հիմնական գումարի մարումը եվ նրա վրա հաշվարկված տոկոսները՝ փոխառության պալմանագրին համապատասխան;

ե) ներդրման ամբողջ մասի կամ մի մասի վաճառքից, կամ լուծարումից ստացված հասույթը;

զ) ներդրման պահպանման եվ ընդլայնման նպատակով կապիտալի լրացուցիչ ներդրումներ:

2. Փոխանցումները կիրականացվեն ազատ փոխարկելի արժույթով փոխանցման օրվա դրությամբ, նկատի առնելով ենթակա արժույթի կանոնավորումը փոխանցման գործող ջուկայական արժույթային կուրսով:

3. Ասկաի 1-ին եվ 2-րդ կետերի դրույթներից, կողմերից յուրաքանչյուրը կարող է պահպանել այն օրենքներն ու կանոնները, որոնք՝

ա) պահանջում են տեղեկություններ արժույթի փոխանցման վերաբերյալ,

բ) նախատեսում են եկամտահարկի կիրառում ջահաբաժինների, դիվիդենդների եվ այլ փոխանցումների նկատմամբ: Ըացի այդ, կողմերից յուրաքանչյուրը կարող է պաշտպանել վարկատուի իրավունքները եվ ապահովել որոշումների կատարումը, որոնք ընդունվել են դատաքննության ընթացքում իրենց օրենքների արդարացի, անխորական եվ անաչառ կիրառմամբ:

#### Հոդված 5.

Կողմերը համաձայնվում են իրենցից յուրաքանչյուրի խնդրանքով անհապաղ անցկացնել կոնսուլտացիա սույն Պալմանագրի հետ կապված ցանկացած վեճի լուծման նպատակով կամ քննարկել սույն Պալմանագրի կիրառմանը կամ մեկնաբանմանը վերաբերող ցանկացած հարց:

#### Հոդված 6.

1. Սույն հոդվածի նպատակների համար, ներդրումների հետ կապված վեճը, դա՝ կողմի եվ մյուս կողմի քաղաքացիների կամ ընկերությունների միջև առաջացած վեճն է, կապված՝

ա) այդ կողմի եվ նման քաղաքացիների կամ ընկերությունների

միջև ներդրումների վերաբերյալ համաձայնագրերի հետ,

բ) կողմերի մարմինների կողմից քաղաքացիների կամ ընկերությունների արտաքին ներդրման իրականացմանը կամ կիրառությանը վերաբերող ցանկացած թույլտվության հետ,

գ) Սույն Պալմանագրով կամ նրանից բխող ներդրումներին վերաբերող հարաբերությունների վերապահված որեւէ իրավունքի հայտարարված խախտման հետ:

2. Ներդրումների հետ կապված վեճերի դեպքում, վիճաբանող կողմերը վեճերի լուծումը պետք է փնտրեն նախապես բնարկումների եզրակացությունների միջոցով: Եթե վեճը հնարավոր չլինի լուծել ընկերակառուցողական, վեճի մեջ մտած քաղաքացին կամ ընկերությունը վեճը լուծելու համար կարող է դիմել՝

- ա) դատարանին կամ վիճաբանող կողմի ադմինիստրատիվ տրիբունալին, կամ
- բ) որեւէ կիրառելի, նախապես համաձայնեցված վեճեր կարգավորող պրոցեդուրայի, կամ
- գ) 3 պարագրաֆի դրույթների համաձայն:

3. ա) Եթե քաղաքացին կամ ընկերությունը վեճի առարկա հարցը լուծելու նպատակով չի դիմել 2 ա) կամ բ) կետերով նշված մարմիններին եզրակացվել է 6 ամիս վեճի առաջացման ամսաթվից, ապա քաղաքացին կամ ընկերությունը կարող են գրավոր ձեռնարկ վեճը լուծելու համար դիմել հատուկ արբիտրաժի՝

1) Ներդրումների վերաբերյալ վեճերի լուծման Միջազգային կենտրոնին /, Centre, / հիմնված պետությունների եզրակացությունների քաղաքացիների միջեւ ներդրումների վերաբերյալ առաջացած վեճերի լուծման մասին 1965 թ. մարտի 18-ին վաշինգտոնում ընդունված կոնվենցիայի համաձայն /, ICSID-Convention, / Եթե այդ կողմը կոնվենցիայի մասնակից է, կամ

2) կենտրոնի օժանդակ ծառայություններին, եթե հնարավորություն չկա դիմելու կենտրոնին, կամ

3) ՄԱԿ-ի միջազգային առեւտրի իրավունքի գծով Հանձնաժողովի /UNCITRAL/ միջնորդ դատարանի կանոններին համապատասխան, կամ

4) վեճի մասնակիցների միջեւ համատեղ համաձայնեցված ցանկացած այլ դատական հաստատության կամ դատարանի ցանկացած այլ կանոններին համապատասխան:

բ) Եթե վիճաբանող քաղաքացին կամ ընկերությունը նման ձեռնարկ համաձայնության է եղել, ապա յուրաքանչյուր վիճաբանող կողմ կարող է դիմել միջնորդ դատարանին համաձայն համաձայնագրում նշված ընտրության հնարավորության:

4. Այսպիսով, յուրաքանչյուր կողմը համաձայնվում է ներդրումների վերաբերյալ ցանկացած վեճ ներկայացնել միջնորդ դատարան՝ համաձայն քաղաքացու կամ ընկերության գրավոր համաձայնության մեջ նշված ընտրության հնարավորության՝ 3-րդ պարագրաֆի հիման վրա: 3-րդ պարագրաֆում նշված այդպիսի համաձայնությունը, քաղաքացիների կամ ընկերությունների գրավոր համաձայնության հետ միասին, պետք է բավարարի որոշակի պահանջներ հետեւյալ նպատակների համար՝

ա) վիճող կողմերի գրավոր համաձայնությունը՝ ICSID կոնվենցիայի 2-րդ գլխի նպատակների համար /կենտրոնի իրավասություն/, եզրակացված ծառայությունների կանոնների նպատակների համար, եզրակացված

բ) ,, Գրավոր համաձայնագիրը՝ - ՄԱԿ-ի միջազգային դատարանների վճիռների ընդունման եզրակացության կատարման մասին կոնվենցիայի /կնքված՝ 1958թ. մայիսի 10-ին Նյու Յորքում /Նյույորքյան կոնվենցիա/ 2-րդ հոդվածի նպատակների համար:



5. Սույն հոդվածի 3 պարագրաֆի ա/2/,/3/, կամ /4/ կետերում նշված ցանկացած դատաքննություն պետք է անցկացվի նյութորոշման կոնվենցիայի մասնակից պետությունում:

6. Միջնորդ դատարանի դատաքննության ցանկացած որոշումը սույն հոդվածի համապատասխան վերջնական ել պարտադիր է կոնֆլիկտի բոլոր մասնակիցների համար: Կոնֆլիկտի լուրջաբանչյուր մասնակից պարտավոր է անմիջապես կատարել դատարանի որոշումը իր տարածքում:

7. Ներդրումների առիթով վեճերի հետ կապված որեւէ պրոցեդուրայի ժամանակ կողմը չպետք է որպես պաշտպանություն կիրառի հակահայց, հակընդեմ իրավունք կամ այլ բան, որը նա ձեռք է բերել կամ կբերի համաձայն ապահովագրական կամ երաշխավորական պայմանագրի, ի հատուցում կամ այլ փոհատուցում իր հաստատված անբողջ վնասի կամ նրա մի մասի:

8. Սույն հոդվածի 3 պարագրաֆի համապատասխան անցկացվող որեւէ դատավարության նպատակով, որեւէ կողմի կամ քաղաքական ստորաբաժանման օրենքով ել կանոնադրությամբ ստեղծված ցանկացած ընկերություն վեճի պատճառ հանդիացող որեւէ դեպքից կամ դիվանագիտական անմիջապես առաջ հանդիսանում է մյուս կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրում ել պետք է դիտվի որպես այդ մյուս կողմի քաղաքացի կամ ընկերություն ICSID կոնվենցիայի 25/2/բ հոդվածին համապատասխան:

#### Հոդված 7.

1. Սույն Պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ կողմերի միջեւ ծագած ցանկացած վեճը, որը չի լուծվել խորհրդատվությունների կամ դիվանագիտական այլ ուղիների միջոցով, կողմերից լուրջաբանչյուրի ինդրանքով կփոխանցվի միջնորդ դատարան՝ միջազգային իրավունքի կիրառվող կանոնների համապատասխան պարտադրող որոշում կայացնելու նպատակով: Եթե կողմերը չպայմանավորվեն այլ բանի մասին, ապա կկիրառվի միջազգային առեւտրի իրավունքի գծով ՄԱԿ-ի Հանձնաժողովի Արբիտրաժին կանոնակարգը /UNCITRAL/ կողմերի կամ արբիտրների կողմից որոշված հնարավոր փոփոխություններով:

2. Խնդրանքը ստանալու ժամանակափոխից՝ 2 ամսվա ընթացքում, կողմերից լուրջաբանչյուրը կնշանակի մեկ արբիտր: Այդ երկու արբիտրները կընտրեն երրորդ արբիտր որպես նախագահ, որը պետք է լինի որեւէ երրորդ պետության քաղաքացի: UNCITRAL-ի կանոնակարգի դրույթները, որոնք վերաբերում են միջնորդ դատարանի նշանակմանը՝ երեք արբիտրների կազմով, կկիրառվեն mutatis mutandis միջնորդական դատի կազմի նշանակման վերաբերյալ, բացառությամբ այն, որ նշանակող մարմինը, որի մասին նշվում է կանոնակարգի մեջ, կլինի կենտրոնի գլխավոր բարտուղարը:

3. Եթե այլ բան չի համաձայնեցվել, ապա բոլոր փաստաթղթերը կիրականացվեն ել բոլոր դատաքննությունները կապարտվեն երրորդ արբիտրի ընտրության ժամանակափոխից սկսած 6 ամսվա ընթացքում ել դատարանը կընդունի իր որոշումները փաստաթղթի վերջին հանձնման կամ դատաքննությունների ավարտի ժամանակափոխից սկսած 2 ամսվա ընթացքում՝ կապված այն բանից, թե այդ դեպքերից որն է ավելի ուշ տեղի ունեցել:

4. Նախագահի, մյուս արբիտրների գործունեության հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ վեճի ըննարկման հետ կապված այլ ծախսերը կողմերը կկրեն հավասար չափով:

Դատարանը կարող է իր հայեցողությամբ սահմանել՝ թե կողմերից որը պետք է վճարի ծախսերի մեծ մասը:

#### Հոդված 8.

6 եւ 7 հոդվածների դրույթները չեն կիրառվի այն վեճերի գծով, որոնք առաջանում են՝

- ա) ԱՄՆ-ի էքսպորտ - իմպորտ բանկի արտահանման վարկերից, երաշխիքներից եւ պահովագրության ծրագրերից կամ
- բ) պաշտոնական վարկերից, երաշխիքներից կամ պահովագրական միջոցառումներից, որոնք նկատմամբ ծագած վեճերը կողմերը համաձայնվել են լուծել այլ միջոցներով:

#### Հոդված 9.

Սույն Պայմանագիրը չի արգելի կիրառել.

ա) կողմերից յուրաքանչյուրի օրենքները եւ կանոնները, վարչական պրակտիկան կամ քննադատարկները, վարչական կամ դատական որոշումները:

բ) միջազգային իրավական պարտավորությունները, կամ

գ) կողմերից յուրաքանչյուրի կողմից ընդունվող պարտավորությունները, ներառյալ ներդրման կամ դրա համար թույլտվության մասին պայմանագրում պարունակված պարտավորությունները,

որոնք ներդրումներին կամ ներդրման հետ կապված գործունեությանը տրամադրում են ավելի բարենպաստ ռեժիմ, քան այն, որը սրվում է սույն Պայմանագրով նման դեպքերում:

#### Հոդված 10.

1. Սույն Պայմանագիրը չի արգելի ցանկացած կողմին կիրառել հասարակական կարգի պահպանման, միջազգային խաղաղության կամ անվտանգության պահպանման, վերականգնման կամ անվտանգության սեփական էական ջանքերի պաշտպանության վերաբերյալ նրա պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցներ:

2. Սույն Պայմանագիրը չի արգելի կողմերից յուրաքանչյուրին սահմանել հատուկ պահանջներ ներդրումների իրականացման կապակցությամբ, ընդ որում այդպիսի պահանջները չպետք է վատացնեն սույն Պայմանագրում վերը նշված իրավունքներից ցանկացածի էությունը:

#### Հոդված 11.

1. կողմերից յուրաքանչյուրը իր հարկային քաղաքականության բնագավառում կձգտի ներկայացնել արդար ռեժիմ մյուս կողմի քաղաքացու եւ քննչության ներդրման նկատմամբ:

2. Սույն Պայմանագրի դրույթները, մասնավորապես 6-րդ եւ 7-րդ հոդվածները, կկիրառվեն հարկերի վերաբերյալ հարցերի նկատմամբ միայն այն դեպքում, եթե նրանք վերաբերում են՝



- ա) սեփականագրվածներ՝ համաձայն 3-րդ հոդվածի  
բ) փոխանցումներին՝ համաձայն 4-րդ հոդվածի, կամ  
գ) ինվեստիցիոն համաձայնագրի նորմերի պահպանմանը, իրագործմանը կամ թուլատրմանը՝ 6-րդ հոդվածի 1 (ա) կամ (բ) կետերի իմաստով, այնքանով, որքանով նրանք չեն ընկնում կողմերի միջեւ երկակի հարկումից խուսափելու մասին կոնվենցիայի դրույթների տակ կամ ծագել են վեճերի լուծման ալդայիսի կարգի կապակցությամբ եվ չեն կարգավորվել ընդունելի ժամանակահատվածում:

#### Հոդված 12-րդ

Սույն Պայմանագիրը կկիրառվի կողմերի քաղաքական ենթակառուցվածքների նկատմամբ:

#### Հոդված 13-րդ

1. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման ժամանակաթվից 30 օր հետո: Այն կգործի 10 տարվա ընթացքում եւ կշարունակի գործել այնքան ժամանակ, մինչեւ չի դադարեցվի սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կկիրարկվի ներդրումների նկատմամբ, որոնք գոյություն ունեն նրա ուժի մեջ մտնելու պահից, ինչպես նաեւ այն ներդրումների նկատմամբ, որոնք իրականացվել կամ ձեռք են բերվել նրա ուժի մեջ մտնելուց:

2. կողմերից յուրաքանչյուրը առաջին տասնամյա ջրջանի ավարտից մեկ տարի առաջ կարող է զրավոր տեղեկացնել մյուս կողմին սույն Պայմանագրի գործողության դադարեցման մասին, իսկ առաջին տասնամյակից հետո՝ ցանկացած ժամանակ:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք իրականացվել կամ ձեռք են բերվել մինչեւ սույն Պայմանագրի գործողության դադարեցման ժամանակաթիվը, եվ որոնք նկատմամբ սույն Պայմանագիրը կկիրարկվեր, եթե այն մնար ուժի մեջ, սույն Պայմանագրի մնացած բոլոր կետերի դրույթները կգործեն դադարեցման ժամանակաթվից հետո հաջորդ տասը տարիների ընթացքում:

4. Սույն Պայմանագրի հավելվածը հանդիսանում է նրա անբաժնելի մասը:

Ի հաստատումն վերը շարադրվածի պատճառ կարգով Լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Պայմանագիրը:

կատարվել է վաշինգտոնում, 1992 թվականի սեպտեմբերի 23-ին, անգլերեն և եզգով: Հայերեն և եզգով տեքստը կպատրաստվի եվ կհամարվի հավասարազոր վավերական նրա վավերացման եվ անգլերեն տեքստի հետ համապատասխան լինելու մասին դիվանագիտական նոտաների փոխանակումից հետո:

Ամերիկայի Միացյալ Նահանգների  
կառավարության կողմից

Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից

1. ԱՄՆ-ի կառավարությունը իրեն իրավունք է վերապահում սահմանափակ բացառություններ անել /կամ պահպանել նրանք բացառությունները/ հոդված 2-ի կետ 1-ում սահմանված ազգային ռեժիմից հետեվյալ բնագավառներում.

օդային տրանսպորտ, օվկիանոսային եվ մերձափնյա նավագնացություն, բանկային գործունեություն, ապահովագրություն, կառավարական նպաստներ, ապահովագրության եվ փոխառությունների կառավարական ծրագրեր, էներգետիկա, մաքսատնային ծառայության մեջ բրոկերություն, անշարժ գույքի տիրապետում, ռադիոհաղորդումների, հասարակական ռադիո եվ հեռուստակայանների տիրապետում եվ կառավարում, կապի արբանյակների կորպորացիաների բաժնետոմսերի տիրապետում, հասարակական հեռախոսային եվ հեռագրական կապի ռադիո ծառայություններ, ստորջրյա կաբելային ծառայություն, հողի եւ բնական ռեսուրսների օգտագործում, հանրային ընդերքների լեռնային մշակումներ, կառավարության արժեթղթերի հետ հիմնական բորսային գործառություններ, ծովային եվ նրա հետ կապված ծառայություններ, ստորջրյա կաբելային գծերի (ծառայությունների) մատակարարում:

2. ԱՄՆ-ն իրեն իրավունք է վերապահում սահմանափակ բացառություններ անել (կամ պահպանել նրանք բացառությունները), ինչպես նշված է հոդված 2-ի առաջին պարագրաֆում, հետեվյալ բնագավառներում, որոնցում ոչ մի ազգի էի տրամադրվի առավելագույն բարենպաստության ռեժիմ՝ այն բաժիններում եւ դեպքերում, որոնք նշվում են ստորեվ՝

հանրային ընդերքների լեռնային մշակումներ, ծովային եվ նրա հետ կապված ծառայություններ, ԱՄՆ-ի արժեթղթերի հիմնական բորսային գործառություններ եվ անշարժ գույքի տիրապետում:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրեն իրավունք է վերապահում սահմանափակ բացառություններ անել (կամ պահպանել նրանք բացառությունները), հոդված 2-ի կետ 1-ում սահմանված ազգային ռեժիմից հետեվյալ բնագավառներում.

կառավարական նպաստներ, ապահովագրության եվ փոխառությունների կառավարական ծրագրեր, մաքսային ծառայության մեջ բրոկերություն, ռադիոհաղորդումների հասարակական ռադիո եվ հեռուստակայանների տնօրինում եւ կառավարում, բնական ռեսուրսների օգտագործում, հանրային ընդերքների լեռնային մշակումներ: